**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԽԱԼԱՖՅԱՆԻՆ**

*(Հաշվետու ժամանակահատված՝ 2023 թվականի մայիսի 11-ից մինչև 2024 թվականի մայիսի 7-ը:)*

**Հաշվետվություն**

Ես՝ Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ Վարսենիկ Համլետի Հարությունյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները.

1. 2023 թվականի հունիսի 10-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը իրականացվել է ՀՀ կառավարության, կառավարության ենթակա մարմինների և վարչապետի ենթակա մարմինների թվով 108 պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման ուսումնասիրություն:
Նախնական ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների վերաբերյալ կազմվել են տարբեր հարցադրումներով հարցման գրություններ՝ (թվով 59) խախտման առկայության փաստը հաստատելու կամ հերքելու նպատակով:
2. Բարեվարքության տարրերի՝ վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների և շահերի բախման վերաբերյալ ստացված թվով 7 դիմումների, 5 մեդիա հրապարակումների, Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից ուղարկված թվով 2 զեկուցագրի հիման վրա ուսումնասիրության իրականացում, խախտումների առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանքի կազմում, դիմումների պատասխանների կազմում (խորհրդատվության

տրամադրում՝ մեկնաբանում, պարզաբանում, առաջարկության ներկայացում) ներկայացում վարչության պետին:

3. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի նախագծի շուրջ աշխատանքային քննարկումների մասնակցություն:
4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների փոփոխությունների կատարման վերաբերյալ կարգի նախագծի առնչությամբ առաջարկների ներկայացում վարչության պետին:
5. Թվինինգ ծրագրի շրջանակներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման վերաբերյալ կազմակերպված վերապատրաստման մասնակցություն:
6. Թվինինգ ծրագրի շրջանակներում շահերի բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ կրթական մոդուլների մշակման մասնակցություն:
7. 2024 թվականին իրականացվող մշտադիտարկման նոր պլանի նախագծի կազմում, այդ թվում՝ մեթոդական մասի փոփոխություն և շահերի բախման բացահայտման վերաբերյալ դրույթների ավելացման վերաբերյալ առաջարկի ներկայացում:
8. Հանձնաժողովի 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության լրացում:

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**
**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝** **ՎԱՐՍԵՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**(Հաշվետու ժամանակահատված՝ 11.05.2023թ.-07.05.2024թ.)**

Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության փորձագետ Վարսենիկ Հարությունյանի կողմից 2023 թվականի մայիսի 11-ից մինչև 2024 թվականի մայիսի 7-ը իրականացրած աշխատանքները՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքների գնահատվում է.

1. Բավարար
2. Լավ
3. Գերազանց

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության
Վարչության պետի պարտականությունները կատարող՝
Տիգրանուհի Խալաֆյան

(ստորագրություն)

07.05.2024թ.